ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.07.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/37

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Սլացք» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝

Լ. Քոչարյանի (լիազորագիր, տրված՝ 30.05.2019թ.)

ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ՝

Տ. Գասպարյանի (լիազորագիր, տրված՝ 23.05.2019թ.)

քննելով ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար զանազան պահեստամասերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Սլացք» ՓԲԸ-ի կողմից 05.06.2019թ. ներկայացված (05.06.2019թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/37 բողոք), պարզեցի հետևյալը.

1. «Սլացք» ՓԲԸ -ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Սլացք» ՓԲԸ-ն (հետայսու՝ Ընկերություն) 05.06.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) կողմից զանազան պահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ցածր գին ներկայացնելու պայմանով Ընկերությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է 103 146 430,2 ՀՀ դրամ:

Քանի որ ՀՀ ՊՆ գնումների պլանով նախատեսված գինը գերազանցել է 70 մլն ՀՀ դրամը, հրավերով պահանջվել է երաշխիք: Առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելուց հետո Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից պահանջվել է ներկայացնել երաշխիքի բնօրինակի արտատպված տարբերակը, որը և կատարվել է Ընկերության կողմից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ստացվել է ծանուցում, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկարգով գնման ընթացակարգին «Սլացք» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման գումարը (7 251 663 ՀՀ դրամ) քիչ է Ընթացակարգի հրավերով սահմանված առավելագույն գումարի 5 տոկոսից (7 251 663,40 ՀՀ դրամ): Ուստի գնահատող հանձնաժողովը 22.05.2019թ., հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետը, մերժել է «Սլացք» ՓԲԸ-ի ներկայացրած հայտը:

Ընկերության կողմից ներկայացված երաշխիքով տրվել է 7 251 663 ՀՀ դրամ:

Բանկի կողմից Ընկերությանը տրվել է նաև տեղեկանք, որ գումարը սխալմամբ կլորացվել է դեպի ներքև, բայց պետք է լիներ 7 251 663,40 ՀՀ դրամ: Բանկը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին խնդրել է հիմք ընդունել 7 251 663,40 լումա գումարը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը սխալմամբ մերժել է Ընկերության հայտը, որովհետև Ընկերության կարծիքով լուման հաշվարկային միավոր չէ: Բայց և այնպես, բանկը տվել է տեղեկանք, որ պետք է հիմք ընդունել 7 251 663,40 լումա գումարը: Բանկն է երաշխիքի պատասխանատուն և ինքն իրավունք ունի նշել գումարը, քանի որ խախտման ժամանակ հենց բանկն է վճարելու գումարը:

Ընկերության կարծիքով գումարը պակաս չի եղել և այդ պատճառով պետք չէր մերժել Ընկերության հայտը: 2-րդ տեղ զբաղեցրած մասնակցի ներկայացրած գինն էականորեն տարբերվում է Ընկերության ներկայացրած գնից և անհասկանալի է պետության համար կարևոր է գնել մատչելի ապրանք, թե 40 լումայի համար մերժել և գնել մի քանի միլիոն ավելի թանկ ապրանք:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Այստեղից էլ պարզ է դառնում, որ Ընկերությունը որևէ օրենք չի խախտել:

Ընկերությունը բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Սլացք» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին 15.05.2019թ. որոշումը և 2-րդ տեղի մասնակցին 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը:

Ի լրումն բողոքի 10.06.2019թ. ներկայացված գրությամբ Ընկերությունը հայտնել է հետևյալը.

1. ՀՀ գերագույն խորհրդի 25.03.1992թ. որոշման 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ազգային դրամը անվանել «դրամ», մանրադրամը՝ «լումա»: Սահմանել, որ մեկ դրամը հավասար է հարյուր լումայի:

2. «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն 1. Հայաստանի Հանրապետության արժույթը հայկական դրամն է: Մեկ դրամը հավասար է հարյուր լումայի: Հայկական դրամը թողարկվում է (շրջանառության մեջ է դրվում)

թղթադրամի և մետաղադրամի (այդ թվում՝ հուշադրամի), իսկ լուման՝ մետաղադրամի (այդ թվում՝ հուշադրամի) ձևով:

3. ՀՀ հարկային օրենսգրքի 318-րդ հոդվածի համաձայն՝ հարկային հաշվարկներում, ինչպես նաև հարկային մարմնի կողմից կազմվող և հարկ վճարողին տրվող ծանուցագրերում, տեղեկանքներում, արձանագրություններում, ստուգման ակտերում և այլ փաստաթղթերում հարկ վճարողի հարկային պարտավորությունների գումարների, դեբետային գումարների և փոխհատուցման ենթակա գումարների հաշվառման համար, որպես չափման միավոր, ընդունվում է դրամը (լումաներն անտեսվում են):

4. ՀՀ ֆինանսների նախարարի 25.12.96թ. N 563 հրամանով հաստատված ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ հրահանգով հաստատված 46-րդ կետի համաձայն՝ Պետական տուրքի վճարման ենթակա գումարը կլորացվում է մինչև 1 դրամ, ընդ որում ՝ մինչև 50 լուման հաշվի չի առնվում, իսկ 50-ից ավելին ընդունվում է որպես 1 դրամ:

Ընկերությունը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության հայտը մերժելու մասին որոշումը չի կարող լինել օբյեկտիվ, այն պարզ պատճառով, որ թե ՀՀ հարկային օրենսգրքի մեջբերված 318-րդ հոդվածով թե ՀՀ ֆինանսների նախարարի հրահանգով սահմանվում են, որ վճարման ենթակա գումարները կլորացվում են մինչև 1 դրամ, ընդ որում ՝ մինչև 50 լուման հաշվի չի առնվում, իսկ 50-ից ավելին ընդունվում է որպես 1 դրամ:

Ինչպես նաև, այնուամենայնիվ, Բանկի կողմից Ընկերությանը տրվել է նաև տեղեկանք, որ գումարը սխալմամբ կլորացվել է դեպի ներքև, բայց պետք է լիներ 7 251 663,40 լումա: Բանկը ՊՆ հանձնաժողովի խնդրել է հիմք ընդունել 7 251 663,40 լումա գումարը:

Այստեղից կարելի է հետևություն անել, որ լուման չի կարող հանդիսանալ հաշվարկային միավոր, կամ եթե այնուամենայնիվ հարգարժան բողոքներ քննող անձը կգտնի, որ այն հաշվարկային միավոր է, ապա պետք է հաշվի առնել, որ այն կարող էր էական դեր խաղալ միայն այն դեպքում, երբ լիներ 50 և ավելի, որի դեպքում կիրառելի կլիներ, ՀՀ ֆին. Նախի Հրահանգը՝ 50-ից ավելին ընդունվում է որպես 1 դրամ: Այս դեպքում Բանկը կկլորացներ դեպի վեր, կամ չանելու դեպքում, հանձնաժողովի Ընկերության հայտը մերժելու մասին որոշումը կլիներ իրավաչափ:

Թեև, այնուամենայնիվ Ընկերությունը գտնում է, որ 1 դրամի համար չի կարելի մերժել առաջին՝ ամենաէժան գնային առաջարկ ներկայացրած մասնակցին, քանի որ ավելի լավ է մեկ դրամով պակաս ապահովում ստանալ, քանի մի քանի միլիոնի վնաս կրել ու պատճառել այն էլ ՀՀ ՊՆ (ըստ էության զին. ծառայողներին), հաղթող ճանաչելով «լումա առ լումա» հաշվարկով երաշխիք ներկայացրած հաջորդ մասնակցին:

Նման դիրքորոշում հիմնավորվում է նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով, համաձայն որի՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին:

Ի դեպ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի և Կարգի միջև առկա է հակասություն, սակայն հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտերի նորմերի միջև կոլիզիաների դեպքում, ըստ հերթականության, կիրառվում է ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտի նորմը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 4-րդ հոդվածի կարգավորման համաձայն՝ քաղաքացիական օրենսգրքի և այլ օրենքների, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերի հիման վրա ու ի կատարումն դրանց՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն իրավունք ունի ընդունել քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող որոշումներ:

Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագիրը, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը, քաղաքացիական օրենսգրքին կամ այլ օրենքի հակասելու դեպքում, կիրառվում է սույն օրենսգիրքը կամ համապատասխան օրենքը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

Վերը նշվածից պարզ է, որ Կարգում առկա է հակասություն քաղաքացիական և ՀՀ գնումների օրենսդրության հետ, ու այս դեպքում չպետք է կիրառելի լինի 526-Ն որոշման կարգավորումը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 4-րդ և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածների հիմքով:

Այսպիսով, Ընկերությունը գտնում է, որ ՊՆ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը սխալ է մերժել Ընկերության հայտը, քանի որ Ընկերության կարծիքով գումարը պակաս չի եղել, և այդ պատճառով պետք չէր մերժել վերջինիս: Երկրորդ տեղ զբաղեցրած մասնակցի գինը էական տարբերվում է ՓԲԸ-ի ներկայացրած գնից և անհասկանալի է պետության համար կարևոր է գնել մատչելի ապրանք, թե 40 լումայի համար մերժել և գնել մի քանի միլիոն ավելի թանկ ապրանք:

Համապատասխան մրցույթի արդյունքները դիտարկելով այլ տեսանկյունից արձանագրվում է նաև այն փաստը, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում: Եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին: Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն ենթակետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

«Սլացք» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 11.06.2019թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ դիրքորոշումը:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 18.06.2019թ. թիվ ՊՆ/02/912-2019 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանվել են հայտի ապահովման ներկայացման կարգը և ձևը, մասնավորապես՝ Հրավերի 7-րդ բաժնի 1-ին կետով սահմանվել է, որ «Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում: Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է սույն ընթացակարգի շրջանակում առավելագույն գումարի հինգ տոկոսին: Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն կետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:»:

Ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում պարզվել է, որ «Սլացք» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած հայտի ապահովման գումարը (7 251 663 ՀՀ դրամ) քիչ է Ընթացակարգի հրավերով սահմանված առավելագույն գումարի 5%-ից (7251663,40 ՀՀ դրամ): Ուստի գնահատող հանձնաժողովը 22.05.2019թ., հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը, մերժել է «Սլացք» ՓԲԸ-ի ներկայացրած հայտը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 11.06.2019թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է գնումների մասին ՀՀ օրենսդրության շրջանակներում:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/37 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/37 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Սլացք» ՓԲԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.05.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Սլացք» ՓԲԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության ներկայացրած հայտի ապահովման գումարը (7 251 663 ՀՀ դրամ) քիչ է Ընթացակարգի հրավերով սահմանված առավելագույն գումարի 5 տոկոսից (7 251 663,40 ՀՀ դրամ):

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Սլացք» ՓԲԸ-ի կողմից 05.06.2019թ. ներկայացված բողոքը, ՀՀ պաշտպանության նախարարության 18.06.2019թ. թիվ ՊՆ/02/912-2019 գրությանը կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին: Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն ենթակետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով բաց մրցույթ:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 4-րդ կետի 4.3 ենթակետի 5-րդ պարբերությամբ սահմանվել է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում, որը ներկայացվում է կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Ընդ որում հայտով ներկայացվում է կանխիկ փողի վճարումը հավաստող փաստաթղթի բնօրինակից կամ բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը: Եթե բանկային երաշխիքի ձևով հայտի ապահովում ներկայացրած մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա վերջինս սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում է հայտով ներկայացված բանկային երաշխիքի բնօրինակը՝ իր կողմից հաստատված ուղեկցող գրությամբ:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 7-րդ կետի 7.1 ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում: Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է սույն ընթացակարգի շրջանակում առավելագույն գումարի հինգ տոկոսին: Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն կետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

Ընթացակարգի մասնակից «Սլացք» ՓԲԸ-ի կողմից որպես հայտի ապահովում ներկայացվել է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից 14.05.2019թ. տրված թիվ 16 05 40 30245/9 բանկային երաշխիքը, որի չափը չափը կազմել է 7 251 663 ՀՀ դրամ:

Ընկերության հայտի թիվ 5 հավելվածով ներկայացված գնային առաջարկի ընդհանուր գինը կազմել է 103 146 430.2 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.05.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 2-րդ կետի 2.3 ենթակետով կայացված որոշմամբ «Սլացք» ՓԲԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության ներկայացրած հայտի ապահովման գումարը (7 251 663 ՀՀ դրամ) քիչ է Ընթացակարգի հրավերով սահմանված առավելագույն գումարի 5 տոկոսից (7 251 663,40 ՀՀ դրամ):

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է ***հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին:***

Նույն դրույթը սահմանված է նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետով, որի համաձայն՝ ***հայտի ապահովման չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին:*** Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն ենթակետով ***սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:***

«Սլացք» ՓԲԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է ***103 146 430,2 ՀՀ դրամ***, որի հինգ տոկոսը կազմում է ***5 157 321,51 ՀՀ դրամ***, իսկ Ընկերության կողմից

բանկային երաշխիքի ձևով ներկայացված ***<u>հայտի ապահովման չափը կազմել է 7 251 663 ՀՀ դրամ</u>***, հետևաբար արձանագրում եմ, որ «Սլացք» ՓԲԸ-ի կողմից հայտի ապահովումը ներկայացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի և Կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի պահանջներին համապատասխան:

Ուստի գտնում եմ, որ մերժելով «Սլացք» ՓԲԸ-ի հայտը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է ոչ իրավաչափ:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Սլացք» ՓԲԸ-ի 05.06.2019թ. բողոքն ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Սլացք» ՓԲԸ-ի կողմից 05.06.2019թ. ներկայացված բողոքը բավարարել.

պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Սլացք» ՓԲԸ-ի հայտը մերժելու և «ՏԻԳՎԱՆ» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին 15.05.2019թ. թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**